# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Տափերականի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Բնագիտություն>>/4դասաժամ/,<<Պատմություն>>,ինչպես նաև<<Իմ հայրենիքը և աշխարհը>>/23դասաժամ/1 ուսուցիչ ,<<Մաթեմատիկա>>/20դասաժամ/ուսումնական առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1)դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3X4չափսի,

2)բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),

3)անձը հաստատող փաստաթուղթ,

4)«Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5)ինքնակենսագրություն (Ձև 5),

6)այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9)որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

10)Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թվականի ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).

11)«Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի)պահանջվող համապատասխան փաստաթուղթ.

12)«Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատուն անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թվականի սեպտեմբերի 4-ից մինչև 2025թվականի

սեպտեմբերի 17-ը ներառյալ ,ամենօր՝ ժամը 10:00-ից 15:00-ը ,բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. սեպտեմբերի 19-ին ՝ ժամը 14:00-ին**, Տափերականի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Տափերական, Թամանցիներ 10:

Տեղեկությունների համար զանգահարել 094-63-30-94 հեռախոսահամարով: